ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐԵԼԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-26/30

ք. Աբովյան «05» 03 2026թ.

«ԼԻՖՏԵԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ն այսուհետ «Կատարող» ի, դեմս տնօրեն Վ. Սարիբեկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, այսուհետ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Մարգարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է իրականացնել վերելակի տեխնիկական ամսական սպասարկման ծառայությունը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին պատկանող Վ. Վաղարշյան 13ա հասցեում գտնվող վերելակի տեխնիկական սպասարկում:

1.2. Պատվիրատուն պարտավորվում է 1.1 կետում նշված ծառայության համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը՝
2.2. Մատուցում է սույն պայմանագրի 1.1 կետում ծառայությունները
2.3. վերելակների սարքավորումների ու դրա պատկանելիքների վերանորոգման աշխատանքների կատարմանը ձեռնմուխ է լինում Պատվիրատուից ստացած տեղեկատվությունից հետո 24 ժամվա ընթացքում
2.4. Ինքնուրույն որոշում է ծառայության մատուցման համար անհրաժեշտ մասնագետների քանակը, ինչպես նաև կազմում նրանց աշխատանքային գրաֆիկը:
2.5. Պարտավորվում է վերացնել պատվիրատուի կողմից շահագործման ընթացքում կանոնների խախտման կամ դիտավորյալ փչացման հետևանքով առաջացած վթարները պատվիրատուի հաշվին /հատուկ պատվերով/:
2.6. Անհրաժեշտության դեպքում իրավունք ունի սույն պայմանագրի կատարման համար ներգրավել երրորդ կողմի:
2.7. Պարտավոր է վերելակների սպասարկման աշխատանքները կատարելու համար ունենալ որակավորված մեխանիկներ և անցկացնել սպասարկող վերելակների ընթացիկ տեխ. զննումներ հետևյալ պարբերությամբ.

_____ Տեխ. զննում N 1՝ յուրաքանչյուր 15 /տասնհինգ/ օրը մեկ անգամ:
_____ Տեխ. զննում N 2՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:
_____ Տեխ. զննում N 3՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ:

2.8. պարտավոր է ապահովել վերելակների տեխնիկապես անվտանգ և անխափան աշխատանքը մինչև հետագա շահագործման թույլտվությունը:
2.9. Պատվիրատուն
2.10. Կատարողի ծառայությունների համար վճարում է սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված կարգով, չափով և ժամկետներում:
2.11. Համապատասխան մասնագետների և կազմակերպությունների միջոցով ապահովում է վերելակների անընդհատ էլեկտրաէներգիան ամբողջական և սարքին վիճակում պահպանում էլ. հաշվիչը, ապահովիչները, էլեկտրոհաղորդալարերը մինչև մեքենայական սրահի գլխավոր անջատիչը:
2.12. Ապահովում է մեք. սրահում և հորանում սանիտարահիգիենիկ վիճակը, այնտեղ գտնվող սարքավորումներին մոտեցման հարմարությունը:
2.13. Բացառում է՝ կողմնակի անձանց մուտքը մեք. սրահ և նորմայից ծանր բեռների փոխադրումը, վերելակների շահագործումը ըստ կանոնների իրականացնելու համար:
2.14. Վերելակների մեք. սրահի բանալիներով ապահովում է վերելակային ծառայությանը և վերելակավարին:

3. ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԸ, ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով մատուցվող ծառայության վճարը կազմում է ամսական 27300 (քսանյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է շահագործման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքների և պահեստանասերի վճարը մինչև 2000 դրամ արժողությամբ:

3.2. Վճարումները կատարվում են փոխանցման կարգով հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում 05.01.2026թ.-ից և գործում է մինչև 30.12.2026թ.: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելը Կողմերի միջև 05.01.2026թ.-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ (քաղ. օրենսգրքի 441-րդ հոդված, 2-րդ մաս.) և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել 4.4 կետում սահմանված կարգով: Կողմերից մեկի նախաձեռնությամբ մյուսի կողմից իր պարտականությունները պարբերաբար չկատարելու դեպքում:

4.3. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը չի ազատում կողմերին տվյալ պահին ընթացիկ պարտավորությունները ամբողջությամբ կատարելուց:

4.4. Սույն պայմանագրով կողմերից յուրաքանչյուրին իրավունք է վերապահվում վաղաժամկետ լուծել պայմանագիրը սեփական նախաձեռնությամբ 1 ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությամբ:

5.2. Հետագա շահագործման թույլտվությունը ստանալու համար կատարել անհրաժեշտ տարեկան տեխ. զննման և պլանային նախապատրաստական աշխատանքներ, համաձայն թերությունների ակտի:

5.3. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4. Սույն պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

5.5. Աշխատանքային ժամերն են՝ 9^{00} - 18^{00}:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարող	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԼԻՖՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ **ք. Աբովյան, 4-րդ մկրջ. 31/35** **<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ** **ՀՎՀՀ 03536607** **Հ/Հ115001523980010 0** **Տնօրեն Վ. Սարիբեկյան**	**ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե** **ք.Երևան Վ.Վաղարշյան 13՝** **Ֆին. նախ. գործառնական վարչություն** **ՀՎՀՀ 00243582** **Հ/Հ 900011038701** **Գլխավոր քարտուղար** **Կ. Մարգարյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.